

Universitäts- und Landesbibliothek Bonn

K'ristonêakan vardapetowt'iwn

Teroyenc, Yovhannes T.


Kostandnowpôlis, 1858

urn:nbn:de:hbz:5:1-12562

~~in Hand~~

Goussen 2603





ԲՐԻՍՏՈՆԻ ԱԿՏՆ

ՄԱՐԿԵՊԵՏՈՒԹԻՒՆ



ԿՈՍՏԱՆՆՈՒՊՈԼԻՍ

Ի ՏԳԱՐՍՆԻ ՏԵՄԲԵՆՑ


ՖԷՊԷՃԻ ԽԱՆՆ



United States
P. O.

PROUSSE, LITTÉ

RECHERCHES



ՔՐԻՍՏՈՒՆԿԱՆ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹԻՒՆ



ԳՐԵՑ ԵՒ ՏՊԵՑ

ՅՈՎԱՆՆԵՍ Տ. ԿՐՊՏ.

ՏԷՐՈՅԵՆՑ



Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԱՏԹԻՎՈՍԻ

ԵՐԱՆԵԱԼ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԵՅՆ ՀԱՅՈՑ



1858

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՔԵՊԷՃԻ ԽԱՆՆ

3603

THE UNIVERSITY OF CHICAGO

LIBRARY

1888



1888

Պատճեն վճարող արժանի Վրիստոնեա-
կան վարդապետ-բեան նորոգ յօրինե-
լոյ 'ի Պրոսպեր Յովհաննէս Պատ-
ո-եւոյ Տէրոյնոց ։

Ի 15 Հոկտեմբերի, Պրուսացի Տ.
Կարապետեան Յովհաննէս Պատուե-
լոյն նորոգ յօրինած համառօտ Վրիս-
տոնեական վարդապետութիւնը քննե-
լով մանր խուզողութեամբ, եւ ըստ ա-
մենայնի համաձայն գտնալով ուղղափառ
վարդապետութեան Հայաստանեայց Ա.
Եկեղեցւոյ տուար պահանջութիւն մեր
'ի տպագրութիւն նորա, մինչեւ ցարդ
'ի լոյս ընծայուած Վրիստոնեականնե-
րէն աւելի յարմարաւոր յուսումն դըպ-
րոցական մանկանց աղգիս ։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Ժողովականաց

Հոգե-որ Ժողովոյ ։

Handwritten text at the top of the page, possibly a title or header.

Main body of handwritten text, appearing to be a list or series of entries.

Handwritten text line, possibly a date or reference number.

Handwritten text line, possibly a name or location.

Handwritten text line, possibly a signature or note.

Լ Ռ Դ

Քրիստոնէական վարդապետութիւնը աղայքը բրիտանական ճշմարտութիւններու վարժեէն զատ՝ ուղղափառ հաւատքի դէմքեղած մոլորութիւններէն անոնց միտքը պահպանելու պաշտօնն ալ ունի: Աւստի այս անգամ որ բրիտանական վարդապետութեան օպուստները հատած ըլլալով, Պէյօղլոյի ազգային գործոց հոգաբարձու Ցեարց խնդրօքն և Ս. Երրորդութեան Եկեղեցւոյ ու ազգային գպրոցաց արգեամբքը վերստին ապել պէտք եղաւ, որն որ համառօտ պատասխաններով և նոր կարգու ազգիս կը մատուցանեմք. որպէսզի աղայքնին ժամանակիս պարագաներուն պահանջած կրօնական գիտութեան մէջ ալ վարժուին:

1785
JANUARY 1785

The first of the year was a day of great
importance to the colony. The
assembly met on the 1st of January
and the first business was to
elect a speaker. The speaker
was elected for the year and
the assembly proceeded to
transact the business of the
day. The first business was
to elect a speaker. The speaker
was elected for the year and
the assembly proceeded to
transact the business of the
day. The first business was
to elect a speaker. The speaker
was elected for the year and
the assembly proceeded to
transact the business of the
day.

Ք Ր Ւ Ս Տ Ո Ն Է Ա Կ Ա Ն

Ս Լ Ե Ր Դ Ե Պ Ա Տ ՈՒ Թ Ի Ի Ն

1 Հ. Դու ի՞նչ ես :

Պ. Աստուծոյ ողորմութեամբը մարդ եմ :

2 — Մարդ ըսեցով ի՞նչ հասկ ընալու է :

— Բանական հոգիէ եւ մարմինէ բաղկացած կենդանի մը ,

3 — Բանական հոգին ի՞նչ է :

— Ե՛ն աննիւթ էակն է , որ մարդոյս մարմնոյն հետ միանալով կը կենդանացընէ եւ խորհեցու եւ խօսելու կարող կընէ . եւ այս էակը մասունքներէ բաղկացած չըլլալով չաւրրիւր . ուստի եւ չը մեռնիր :

4 — Մարմինն ի՞նչ է :

— Մարդոյս վրայ երեւցած գործարանաւոր կազմուածքն է , որ ծնողքին արիւնէն կը դոյանայ եւ բանական հոգիով կը կենդանանայ :

5 — Թէ որ գոյութիւնդ ծնողքէդ էնէ ,
Մատուծոյ ողորմութեամբ մարդ եմ ըսե-
լոդ ի՞նչ է :

— Ծնողքը գոյանալնուս առիթ մըն են .
եւ հոգիով կը կենդանանամք , բայց հո-
գին ալ մարմինն ալ բուն գոյացնողն ու
իրարու հետ միացընողը Մատուած է :

6 — Ի՞նչ է Մատուած :

— Ե՛ն յաւիտենական ամենակարող էակն
է՛ որ երկինքն ու երկիրս եւ ինչ որ կայ ե-
րեւելի եւ աներեւոյթ , մինակ հրամանով
մը ստեղծեց . եւ անիկայ չըստեղծած՝
բան մը եղած չէ :

7 — Ե՛ս բաներս ինչո՞ւ համար ստեղծեց :

— Ե՛մենն ալ մարդոյս թէ՛ հոգւոյն եւ
թէ՛ մարմնոյն պիտոյիցը ծառայելու համար :

8 — Ե՛ստուծոյ ստեղծած աներեւոյթ բա-
ները ո՞րն են :

— Ե՛ն բաներն են որ աննիւթ ըլլալ-
նուն համար անեղծ եւ անմահ են . կւ չին
ալ տեսնուիր եւ լսուիր եւ շօշափուիր . ինչ-

պէս մարդոց հողին . հրեշտակները եւ սատանայները :

9 — Հրեշտակներն ի՞նչ են :

— Ե՛րբ իմացական եւ անմարմին ստեղծուածներն են որ Աստուած իրեն ըսպասաւորութեանը յատկացուցած է . եւ մարդոց ալ պահպանութիւնը ասոնց յանձնած է . որ իրենց պաշտօնը կատարելու համար երբեմն մարդու կերպարանքով ալ երեւցած են :

10 — Սատանաները ի՞նչ են :

— Իրենց մեղքովը Աստուծոյ աչքէն ինկած եւ յաւիտենական պատժոյ արժանացած հրեշտակներն են :

11 — Մարմին ? չունեցող հրեշտակները ի՞նչ մեղք կրցան ունենալ :

— Իրենց վրայ անկատարութիւն մը չըտեսներով հպարտացան . եւ Աստուծոյ հնազանդելու պարտականութիւններն ինչըճանչցան :

12 — Մարդս ինչե՞ւ ստեղծեց Աստուած :

— Իր ամենասուրբ կամքը կատարելով

անմեղ հրեշտակներուն Կէս յաւիտենական
փառքը ժառանգելու, եւ երեսէ ինկած-
ներուն տեղը լեցընելու համար:

13 — Աստուծոյ կամքը ի՞նչ է:

— Յայանած ճշմարտութիւնները հաւա-
տալ եւ տուած պատուէրները կատարել:

14 — Որո՞ւ յայտնեց այն ճշմարտութիւն-
ները:

— Ադամայ եւ Եւայի. որ աստուծոյ ըս-
տեղծած առաջին մարդիկը եւ ըզոր մար-
դոց նախածնողն են. եւ անոնցմէ ալ յորդ-
ւոց որդի աւանդելով շարունակուեցաւ:

15 — Ե՞րբ յայտնեց:

— Երբ որ Եւայ սատանայէն, եւ Ա-
դամ ալ Եւայէն խաբուելով Աստուծոյ դէմ
անհնազանդութեան մեղք դործեցին, եւ
ասով իրենց առաջին շնորհքը եւ երջա-
նիկ կեանքին վիճակը կորսնցուցին եւ
դրախտէն դուրս եղան. այն ատենը յայտ-
նեց Աստուած ասոնց որ չյուսահատին.

16 — Ասոնցմէ զատ մարդու յայտնած չունի՞

— Աւանդութիւնը բերնէ բերան անց-

նելով փոխուեցաւ եւ արուեցաւ նէ,
Ըստուած հին եւ ճշմարիտ յայանութեա-
նքն արանդապահ ի սրայէլացիները զա-
տելով այն ազգէն ընտրած մարդոց
յայտնեց, որ մարգարէ ըսուեցան:

17 — Ճշմարտութիւնները Ըստուածմէ յայտ-
նուելուն ի՞նչ նշան կայ:

— Երկու նշան կայ. հրաշք եւ մարգա-
րէութիւն:

18 — Հրաշքը ի՞նչ է:

— Բնական կերպով չըկրնայ ըլլալու բա-
նին իրօք ըլլալն է. ինչպէս երբ մեռել մը
կենդանանայ. կամ հիւանդ մը մէկէն ող-
ջըննայ՝ հիւանդութեան նշան մը կամ
տկարութիւն մը վրան չըմնալով:

19 — Հիմայ ալ հրաշք կըլլայ:

— Ըստուած ամէն ատեն հրաշք կընէ
իւր սուրբ հաւատքին ճշմարտութիւնը
հաստատելու համար. եւ մենք ալ անոր
համար աղօթք կընենք, որ բնական ե-
ղանակով մեզի գալու կամ եկած գէշու-

Թննէն իւր հրաշագործ զօրութեամբը
մեզ ազատէ եւ պահպանէ :

20 — Մարգարէութիւնն ի՞նչ է :

— Ըլլալու բաները տարիներով առաջ
յայտնել, կամ շատ հին ատենները ե-
ղած բան մը ստուգապէս պատմել. ինչ-
պէս որ մարգարէները Քրիստոսի աշ-
խարհք գալը եւ ամէն ընելիքները եւ
կրելիքները գուշակեցին. եւ Մովսէս
մարգարէն աշխարհքիս ինչպէս ստեղծ-
ուիլը պատմեց :

21 — Ըստնց ձեռօքը Ըստուծոյ յայտնած
ճշմարտութիւնները ո՞ր գրուած են :

— Սուրբ գրքերուն մէջ. որոնք Ըստուծ-
մէ յայտնուած խօսքերը պարունակելուն
համար Ըստուածաշունչ կըսուին :

22 — Ո՞րն են աստուածաշունչ գրքերը :

— Երկու կարգ են. հին կտակարան եւ
նոր կտակարան :

23 — Հին կտակարանի գրքերը ո՞րն են :

— Ծննդոց. Ելից. Դեւտացւոց. Խժը-
ւոց. Երկրորդ օրինաց. Յեսուայ. Դաս-

աւարաց . Հռութ . Թագաւորաց չորս
գիրք . Մնացորդաց երկու գիրք . Սէ-
էմի . Եզրասայ երկու գիրք . Եսթեր .
Յուդիթ . Տովբիթ . Մակաբայեցւոց ե-
րեք գիրք . Յոր . Սաղմոս . Ընակաց .
Ժողովողի . Իմաստութեան . Երգ եր-
գոց . Եսայի . Երեմիա . Իարուբ . Դա-
նիէլ . Եզեկիէլ . եւ տասն եւ երկու փոքր
Մարգարէները . ընդ ամէնը քառասուն եւ
վեց գիրք :

23 — Սոր կտակարանի գրքերն ո՞րն են :
— Մատթէոսի . Մարկոսի . Դուկա-
սու . եւ Յովհաննու աւետարանները .
Պործք առաքելոց . Ճակոբու կաթուղիկ-
եայց . Պետրոսի կաթուղիկեայց երկու
թուղթերը . Յովհաննու կաթուղիկեայց
երեք թուղթերը . Յուդայի կաթուղիկ-
եայց . Պողոսի տասն եւ չորս թուղթե-
րը . եւ Յովհաննու յայտնութիւնը . ընդ
ամէնը քսան եւ եօթն գիրք : Եւս աստ-
ուածաշունչ գրքերուն բոլոր պարունա-
կածը ճշմարտութիւն են :

25 — Որն են այն ճշմարտութիւնները :

— Ամէն ճշմարտութիւններու աղբիւրը երկուք են . որոնցմէ միւսերը կը ծագին :

26 — Առաջին աղբիւրը ո՞րն է :

— Այս է . Աստուած կայ . որ ոչ սկիզբն ունի եւ ոչ վախճան . ինքը մէկէ մը եղած չէ , եւ ամէն բանի ստեղծողը ինքն է . : մէկ է՝ եւ մէկէն աւելի չըլլար . եւ երեք անձն է , — Հայր եւ Որդի եւ Հոգի սուրբ .) եւ այս } երեքանձնեայ միութիւնը ամենասուրբ Արրորդութիւն կըսուի :

27 — Հայր եւ Որդի կըսենք նէ՞ մեր հասարակօրէն հասկըցածին պէ՞ս իմանալու է :

— Չէ . Հայր Աստուած իր Որդին կը ծնանի՝ ինչպէս որ մարդոյս միտքը խօսք կը ծնանի . անոր համար Որդին՝ բան Աստուծոյ եւ բանն Աստուած ալ կըսուի : Ուստի քանի որ Հայր Աստուած կայ՝ Որդին Աստուած ալ կայ . եւ անկէջ անբաժանելի է :

28 — Հողին սուրբ ի՞նչ է :

— Եստուծոյ շունչն է . Հայր Եստուած էն եւ Որդի Եստուած էն անբաժանելի կատարեալ Եստուած է . եւ քանի որ Հայր եւ Որդի կան՝ Հողին սուրբ ալ կայ :

29 — Ղշմարտութեան երկրորդ աղբիւրը ո՞րն է :

— Ե՛ն է որ, Որդին Եստուած մարդանալով՝ լոլոր մարդիկ ազամային մեղքէն եւ անոր պատիժէն պիտի ազատէր, ինչպէս որ եղաւ :

30 — Եղամ եւ Եւայ մեղքի մէջ իյնալով ի՞նչպէս ամէն մարդիկ մեղաւոր եւ յաւիտենական պատժոց արժանի եղան :

— Եսոնք լոլոր մարդոց նախահայր լլալով, իրենց Եստուծմէ առած շնորհքնին՝ որ իրենց սերունդին ալ պիտի անցնէր՝ կորսընցուցին նէ, մեղքով վաստակած տկարութիւննին անցաւ իրենց զաւակացը . ինչպէս որ ծնողաց մարմնաւոր հիւանդութիւններուն մէկ քանին իրենց տղայոցը կանցնի :

31 — Ի՞նչ տկարութիւն էր այն :

— Բանականութիւնը կամ խելքը՝ որով մարդս անասուններէն կը տարբերի, կիրքերուն բռնութեանը տակ ինկաւ. որով մարդս Աստուծոյ կամքին համաձայն կեանք վարելու կարողութիւնը կորսնցուց, եւ սասանայի գերի եղաւ. եւ աշխարհքիս թշուառ կեանքը կրելէն զատ, յաւիտեանական պատժոյ ալ պարտական եղաւ : Ամէն մարդ այս պարտականութեանս տակը կը կր ծնանի. բայց Արդւոյն Աստուծոյ մարդանալոյն շնորհիւր կազատի :

32 — Մարդանալ ըսելդ մարդու կերպարանքով երևցա՞ւ ըսել է. ինչպէս հրեքեշտակներուն համար ըսիր :

— Չէ. ճշմարտապէս մարմին եւ հոգի եւ միտք առնելով իր անձինքը հետ միացուց. որով Աստուածային բնութեանը հետ մարդկային բնութիւնն ալ կատարեալ ունեցաւ մի եւ նոյն Արդին Աստուած. եւ Քրիստոս այսինքն օծեալ ըսուեցաւ. եւ օծում ըսելով այս միութիւնը կը հասկընամք :

33 — Ինչո՞ւ համար՞ հրեշտակներուն պէս
չերեցաւ այլ ճշմարտապէս մարդ եղաւ :
— Այսան զի Ադամայ մեղքը քաւելու
համար անմեղ զոհ մը պէտք էր . հրեշ-
տակները մարմնով երեւնան ալ նէ՛ չեն
կրնար մեռնիլ . որով զոհ ալ չեն կրնար
ըլլալ :

34 — Որդին Աստուած ճշմարտապէս մարդ
եղաւ նէ, մէկէ մը ծնած ըլլալու է :

— Այո՛ . 'իյաւիտենից իրեն մայրութեան
սահմանած ըլլալով սուրբ Սարիամ
կոյսը՝ Ադամայ մեղքէն ազատ պահեց .
եւ անոր անարատ արիւնէն Հոգւոյն սրբ-
բոյ ներդործութեամբը մարմին առաւ եւ
ծնաւ . եւ ինքն Աստուած ըլլալուն համար
սուրբ կուսին ալ Աստուածածին կըսեմք :

35 — Ծնած ատենը անունը ի՞նչ դրուե-
ցաւ :

— Ինչպէս որ հրեշտակի ձեռօք պատ-
ուէր եղած էր՝ Յիսուս կոչուեցաւ՝ որ
Փրկիչ ըսել է . վասն՞ զի մարդս սատա-
նայի գերութենէն ազատելու համար աշ-
խարհք եկած էր :

36 — Ի՞նչպէս կեանք վարեց աշխարհքիս վրայ :

— Ինքն Աստուած եւ մարդ ըլլալով՝ երբ կը կամէր Աստուածապէս կը գործէր. եւ երբ կը կամէր մարդկապէս :

37 — Աստուածապէս ի՞նչ գործեց :

— Սուրբ կուսէն ծնած ատենէն մինչեւ մահուանն ատենը իր Աստուածութիւնը յայտնելու համար հրաշքներ ըրաւ. եւ իբրեւ բացարձակ տէր՝ հին օրէնքը խափանելով կատարելագոյն օրէնք տուաւ, եւ կրօնական տրարողութիւններ սահմանեց. եւ իր Աստուածային փառքը յայտնեց :

38 — Մարդկապէս ի՞նչ գործեց :

— Իր ժողովրդեանը տրուած Սովսիսական օրէնքը ամէնն ալ կատարեց. եւ ինչ որ մարդիկ այս աշխարհքիս մէջ Ազգամէն ժառանգած մեղքերնուն պատիժ կը քաշենն է, ինքը բնաւ մեղքի մը հաղորդ չըլլալով՝ այն բաները ամէնն ալ քաշեց :

39 — Ի՞նչ բան էր քաշածը :

— Յոգնեցաւ, անօթեցաւ, ծարաւեցաւ,

տրտմեցաւ, լացաւ, հրեայներէն նախա-
տինք կրեց. որ վերջապէս զինքը մատ-
նեցին եւ խաչ հանել տուին. եւ խաչին
վրայ մեռաւ:

40 — Քրիստոս նախատելու ի՞նչ պատ-
ճառ ունէին հրեայները:

— Արքերինն անոր քարոզած վարդա-
պետութեանը դէմ ըլլալով՝ անոր Աստ-
ուած ըլլալն ալ չընդունեցին. եւ պատ-
ճառ բռնելով թէ Աստուած եմ ըսաւ,
իրիւս անորէն մահապարտ դատեցին:

41 — Քրիստոս որ Աստուած էր՝ ի՞նչպէս
չարչարեցաւ եւ մեռաւ:

— Աստուածութեամբը անչարչարելի եւ
անմահ ըլլալուն համար՝ մահկանացու
մարմին առաւ եւ նոյն մարմնովը մեռաւ.
Եւ մարմինը Աստուծոյ մարմին ըլլալով՝
անոր մահը մարդոց փրկութիւն գործեց:

42 — Ի՞նչպէս:

— Մեռնելէն ետքը մարմնով երեք օր
զելեզմանը մնացած ատենը՝ հոգևով դը-
ժոխքը իջաւ, եւ Ադամայ մեղքին համար

սատանայի գերի եղած արդարները ազա-
տեց. եւ ամէն մարդոց ալ իրեն մահուա-
նը հաղորդ ըլլալու ճամբայ բացաւ. ո-
րով ամէն մարդ կը փրկուի իր շնորհօքը :

43 — Արեք օրէն ետքը ի՞նչ եղաւ :

— Յարեաւ. եւ ճշմարտապէս յարու-
թիւն առած ըլլալը հասկըցընելու հա-
մար՝ իրեն աշակերտներուն՝ եւ ուրիշ՝ հա-
ւատացողներուն երևեցաւ. հետերնին
խօսեցաւ եւ կերակուր կերաւ. եւ քառա-
սուն օր ալ աշխարհի վրայ կենալէն ետ-
քը երկինք համբարձաւ :

44 — Վառասուն օր աշակերտներուն հետ
խօսածը ի՞նչ էր :

— Իր հաւատքը եւ վարդապետութիւնը
ամէն տեղ քարոզել, եւ տուած կարգադ-
րութիւններովը եկեղեցի հիմնել պատուի-
րեց անոնց. որոնք առաջ ալ այս պաշտօ-
նիս ընտրած եւ Նաաքեալ անուանած էր.
եկեղեցւոյն միշտ հաստատ մնալուն հա-
մար ալ Հոգին սուրբը խրկելու խոստ-
մունքը հաստատեց :

45 — Եկեղեցի ըսելով ի՞նչ կը հասկընամք :

— Ե՛յլ եւ այլ ազգէ հաւատացեալ մարդոց միութիւնն է, որոց ամէնն ալ մաքրաբէնեցումն եւ առաքելներուն եւ անոնց յաջորդ եղող հայրապետներուն բերնովը մէկ Լուստուծոյ աւանդած մէկ ճշմարիտ հաւատքը անսխալօք կը պահեն. եւ ասոր համար ընդհանրական եւ առաքելական եկեղեցի կըսուի :

46 — Հոգւոյն սրբոյ գալը եկեղեցիին վերայ ի՞նչ ներգործութիւն ունեցաւ :

— Երեք գլխաւոր ներգործութիւն ունեցաւ :

47 — Եռաջինն ո՞րն է :

— Եռաջուց իրեն թելադրութեամբը օրէնքի գիրքերուն եւ մարգարէութիւններուն մէջ գրուած ճշմարտութիւնները՝ եւ՛ Քրիստոսէ լսածնին յիշելու եւ հասկընալու համար առաքելոց միտքը լուսաւորեց :

48 — Երկրորդ ներգործութիւնը ո՞րն է :

— Եռաքելոց եւ անոնց յաջորդներուն արիութիւն տուաւ որնոյն ճշմարտութիւն

նը աներկիւղ քարոզին, անոր համար ա-
րին թափելն անգամ յանձնառու ըլլա-
լով:

49 — Երբորդ ներդործութիւնը ո՞րն է:

— Ինքն Հոգին սուրբ միշտ եկեղեցի-
ին մէջ մնալով առաջնորդութիւն կընէ՝
որ եկեղեցին այն ճշմարտութիւնները
յաւիտեան անփոփոխ կը պահէ. եւ եր-
բէք սուտ եւ սխալ բան չը սովորեցընէր:

50 — Եկեղեցին այն ճշմարտութիւնները
ո՞ր կը սովորեցընէ:

— Հաւատոյ հանգանակին մէջ. որ առա-
քեալներուն թէ՛ բերնով եւ թէ՛ գրով
սովորեցուցած էրէն համառօտած դաւա-
նութիւն մըն է:

51 — Ո՞րն է այդ դաւանութիւնը:

— Ե՛ս է “ Հաւատամք ’ի մի Աստ-
” ուած ’ի Հայրն ամենակալ յարարիչն
” երկնի եւ երկրի, երեւելեաց եւ անե-
” րեւութից. եւ ’ի մի տէր Յիսուս Վը-
” րիստոս Որդին Աստուծոյ՝ ծնեալն յԱս-
” տուծոյ Հօրէ՛ միածին, այսինքն յէ-

„ ութնէ Հօր: Եստուած Ղօտուծոյ,
„ լոյս 'ի շուտոյ, Եստուած Ճշմարիտ
„ Ղօտուծոյ Ճշմարտէ՛ ծնունդ եւ ո՛չ
„ արարած: Եոյն ինքն 'ի բնութենէ
„ Հօր. որով ամենայն ինչ եղև յեր-
„ կինս եւ 'ի վերայ երկրի, երեւելիք եւ
„ աներեւոյթք: Ար յաղապս մեր մարդ-
„ կան եւ վասն մերոյ վրկութեան ի-
„ ջերալ 'ի յերկնից՝ մարմնացաւ, մարդա-
„ ցաւ, ծնաւ կատարելապէս 'ի Մա-
„ թիամայ սրբոյ կուսէն Հօգևոյն սրբով:
„ Արով էառ մարմին հոգի եւ միտ, եւ
„ զամենայն որ ինչ է 'ի մարդ, Ճշմար-
„ տապէս եւ ո՛չ կարծեօք: Չարչարեալ,
„ խաչեալ, թաղեալ, յերրորդ աւուր յա-
„ ըուցեալ, ելեալ 'ի յերկինս նովին մարմ-
„ նովն նստաւ ընդ աջմէ Հօր: Գալոց
„ է նովին մարմնովն եւ փառօք Հօր
„ 'ի դատել զկենդանիս եւ զմեռեալս,
„ որոյ թագաւորութեանն ո՛չ գոյ վախ-
„ ճան: Հաւատամք եւ 'ի սուրբ Հօգին՝
„ յանելն եւ 'ի կատարեալն, որ խօսե-
„ ցաւ յօրէնս եւ 'ի մարդարէս իւրաւ-

,, ասարանս : Արչէջն 'ի Յորդանան . քա-
 ,, ըրողեաց զառաքեալն , եւ բնակեցաւ 'ի
 ,, սուրբսն : Հաւատամք եւ 'ի մի միայն
 ,, ընդհանրական եւ յառաքելական եկե-
 ,, ղեցի . 'ի մի մկրտութիւն , յապաշխա-
 ,, րութիւն , 'ի քաւութիւն եւ 'ի թողու-
 ,, թիւն մեղաց , 'ի յարութիւն մեռելոց ,
 ,, 'ի դատաստանն յաւիտենից հոգւոց եւ
 ,, մարմնոց , յարքայութիւնն երկնից եւ
 ,, 'ի կեանսն յաւիտենականս :

,, Իսկ որք ասեն՝ էր երբեմն , յոր-
 ,, ժամ ո՛չ էր Արչի . կամ էր երբեմն ,
 ,, յորժամ ո՛չ էր սուրբ Հոգի . կամ
 ,, թէ՛ յոչէից եղեն , կամ յայլմէ էութե-
 ,, նէ ասեն լինել զԱրչին աստուծոյ եւ
 ,, կամ զսուրբ Հոգին . եւ թէ՛ փոփո-
 ,, խելիք են կամ այլայլելիք , զայնպի-
 ,, սիսն նզովէ կաթուղիկէ եւ առաքե-
 ,, լական սուրբ եկեղեցի , , :

52 — Եւ զդաւանութեանը մէջ՝ հաւատամք
 'ի մի միայն եկեղեցի ըսիր նէ , մէկէն ա-
 լելի եկեղեցի չըլլար :
 — Չէ . որովհետեւ ճշմարիտ հաւատքն

ալ որ այս եկեղեցիս հիմն է՝ մէկէն ա-
ւելի չըլլար :

53 — Հասցա այլ եւ այլ եկեղեցիներու ա-
նուն կայ նէ այն ի՞նչ է :

— Հաւատքը մէկ է . եւ ամէն ազգի հա-
ւատացեալներ որ այն հաւատքին կը միա-
բանին՝ մէկ գլխոյ անդամ կըլլան . եւ մէկ
ընդհանրական եկեղեցի կը կազմեն . ա-
նոր համար անոնց ամէն մէկին ալ եկե-
ղեցի կըսուի :

54 — Այս եկեղեցիին՝ գլուխը ո՞վ է :

— Այն եկեղեցին հաստատողն է՝ որ է
Յիսուս Քրիստոս . որ աշխարհքէս համ-
բառնալէն ետքը իրեն փոխանորդ ձգեց
առաքեալները . անոնց ալ յաջորդ եղան
հայրապետները . որ Քրիստոսի փոխա-
նորդն ըլլալով եկեղեցւոյ գլուխ ալ են :

55 — Քրիստոս՝ որ Աստուած ըլլալով ա-
մենակարող է , ինչո՞ւ համար իրեն փո-
խանորդ եկեղեցւոյ գլուխ սահմանեց :

— Արովհետեւ ինքը հիմայ աշխարհի վը-
րայ աչքի տեսնուելու կերպով ներկայ

չէ. եւ եկեղեցին աչքի տակ ընկած տե-
սանելի սուրբ ընկերութիւն մը հաստա-
տեց, անոր համար անանկ սահմանեց որ
անիկայ տեսանելի գլուխներով կառավա-
րի միշտ:

56 — Ո՞վ են այս գլուխները:

— Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն
վրայ՝ հայոց սրբազան կաթողիկոսն է:
Ինչո՞ւնայ՝ իրենց կոստանդնուպօլսի Պատ-
րիարքը: Առաինացւոց եւ բոլոր եւրո-
պացւոց՝ Հռոմայ հայրապետը. եւ նմա-
նապէս ամէն քրիստոնեայ ազգաց՝ իրենց
կաթողիկոսը:

57 — Ե՞ս զանազան ազգերը՝ որ մէկ ընդ-
հանրական եկեղեցի կը կաղմեն, իրարմէ
ինչո՞վ կը տարբերին:

— Եկեղեցւոյ խորհուրդները եւ ծիսա-
կան արարողութիւնները կատարելու կեր-
պով:

58 — Եկեղեցւոյ խորհուրդները ի՞նչ են:

— Յատուկ աստուածային շնորհ եւ հո-
գեւոր արտօնութիւն ստանալու համար

Վրիստոսի տեառն մերոյ սահմանած ար-
տաքին սրբարար նշաններ, եւ անոնց վե-
րաբերեալ արարողութիւններ են:

59 — Եյս խորհուրդները քանի՞ հատ են:
— Եօթն:

60 — Եւաջին խորհուրդը ո՞րն է:
— Սկրտութիւն. որով մարդ քրիստո-
նեայ եւ Վրիստոսի մահուանը արդիւնք-
ներուն հաղորդ. եւ անոր մարմնոյն այս-
ինքն եկեղեցւոյ անդամ եւ յաւիտենական
երջանկութեան ժառանգ կըլլայ:

61 — Վրիստոնեայ ի՞նչ ըսել է:
— Վրիստոսի սովորեցուցած հաւատքին
հետեւող եւ պատուէրները ընդունող ըսել
է. եւ այս անունը մկրտութեան խոր-
հուրդը ընդունողին մինակ կը տրբուի:

62 — Ի՞նչպէս կը տրբուի մկրտութիւնը:
— Վահանայն կառնէ քրիստոնեայ ըւ-
լալու անձը. ամենասուրբ Արրորդութեան
երեք անձանց անունը տալով երեք ան-
գամ ջուրը կը խօթէ կը հանէ:

63 — Երեսնամեայ մարտնչները ամենն ալ յախտենական երջանկութեան արժանի կըլլան:

— Չէ. սուրբ եկեղեցիէն սովորած հաւատքէն զատուելու չէ՛ մինչեւ 'ի մահ. եւ Քրիստոսի եւ եկեղեցւոյ պատուէրները կատարելու է, որ այն երջանկութեանը արժանի ըլլայ:

64 — Եկեղեցւոյ հաւատքէն զատուիլ ի՞նչպէս կըլլայ:

— Երկու կերպով. որոց մէկն է հերետիկոսութիւն. եւ միւսն անհաւատութիւն:

65 — Հերետիկոսութիւնն ի՞նչ է:

— Են է որ՝ քրիստոնեայ մը սուրբ գիրքը ծուռ հասկընալով իր հասկըցածին վրայ կը յամառի. եկեղեցիին տուած մեկնութիւնը չընդունելով նոր հաւատք կը հնարէ կամ ուրիշի հնարածին կը հետեւի:

66 — Ենհաւատութիւնն ի՞նչ է:

— Են է որ մարդ իր խելքը ամէն բանի կը հասնի կարծելով խելքը չըհասած

բանը ուր որ գրուած տեսնէ եւ որկէ՛ց
որ լսէ չըհաւատար :

67 — Խելք չըհասած բանին ի՞նչպէս կը
հաւատացուի :

— Արովհետեւ մեր խելքը ինքնին մինակ
երեւելի արարածներէն տեղեկութիւն
կառնէ . աներեւոյթներուն վրայ հարկ է
Լստուծոյ յայտնութենէն սովորիլ . խել-
քը հաւատքէն օգնութիւն չառած չըկրօ-
նար ինքնին ասանկ բաներու հասնիլ :

68 — Ինչո՞ւ համար ասանկները յաւիտե-
նական երջանկութեան արժանի չեն ըլ-
լար :

— Ընոր համար որ եկեղեցիէն դուրս
ելած իր շահերը հաւատքին զատ ըլլալով ,
կամ հաւատք բնաւ չունենալով . եւ եկե-
ղեցիէն դուրս ելողը արքայութիւն չեր-
թար :

69 — Եսանկները դառնան եւ նորէն , եկե-
ղեցին մըտնել ու զեննէ՛նորէն մկրտե-
լո՞ւ է :

— Չէ՛ . մկրտութիւնը չըկրկնուիր . յանու՛թ

ամենասուրբ Արքորդութեան մկրտուած
մարդ մը նորէն մկրտելն ալ հերետիկո-
սութիւն է :

70 — Արքորդ խորհուրդը ո՞րն է :

— Դրոշմ. եւ այն խորհուրդն է որ քա-
հանայն մէկը մկրտելէն ետքը անոր ճա-
կատը եւ աչքը եւ քիթը եւ բերանը եւ
ականջը եւ կուրծքը եւ կունակը եւ ստքը
սուրբ մեռնով կօծէ յանուն Յիսուսի
Քրիստոսի. եւ ասոր համար կնիք ալ
կրսուի :

71 — Այս խորհուրդը անողը ի՞նչ շնորհք
կընդունի :

— Իբր քրիստոնէական հաւատքը յայտնի
պաշտելու արիութիւն մը կըրստանայ :

72 — Անակ է նէ դրոշմի խորհուրդը ըն-
դունողները բնաւ իրենց հաւատքը չեն
ուրանար :

— Հաւատքներնուն վրայ հաստատուն
կենալու արիութիւն մը կը վաստըկին .
բայց արիութիւնը բանեցընելը կամ չե
բանեցընելը իրենց ձեռքն է, անոր հա-

մար հաւատքնին ուրանան նէ մեծ մեղք
կը գործեն, որ Աստուծմէ առած շնորհք-
նին չեն բանեցըներ:

73 — Երրորդ խորհուրդը ո՞րն է:

— Հաղորդութիւն, որ է Յիսուսի Քրիստոսի մարմնոյ եւ արեան խորհուրդը:

74 — Ի՞նչպէս կը կատարուի:

— Քահանայն սուրբ սեղանոյն վրայ
հացն ու գինին Աստուծոյ կը նուիրէ՝
եկեղեցւոյ սահմանած աղօթքները կար-
գալով, եւ հացին վրայ Քրիստոսի այս
է մարմին իմ, եւ գինին վրայ այս է ար-
իւն իմ ըսելով նոյն հացը եւ գինին ի-
րեն ճշմարիտ մարմին եւ արիւն ընելը յի-
շեցընելէն ետքը՝ Հոգին սուրբ կը կո-
չէ, որով իր ձեռքի հացն ու գինին ալ
Քրիստոսի ճշմարիտ մարմին եւ արիւն
կըլլան:

75 — Այս խորհուրդը առնողը ի՞նչ շնորհք
կընդունի:

— Արժանապէս հաղորդուողը Քրիստո-
սի տեառն մերոյ հետը կը միանայ, եւ

Վրիստոսի իր չարչարանքովը մարդոյս
համար ստացած ամէն արդիւնքները կը
վայելէ :

76 — Բրժանապէս հաղորդիլը ի՞նչպէս
կըլլայ :

— Պէտք է որ մեղքի մը չըլլայ . եւ թէ
որ մեղք մը գործած է նէ, առաջ եկե-
ղեցոյ շորրորդ խորհուրդը ընդունելով
մեղքէն սրբուի :

77 — Շորրորդ խորհուրդը ո՞րն է :

— Բացաշխարհութիւն . որով քահանայն ի-
րեն կատարելապէս խոստովանող մեղա-
ւորին մեղքերը կը քաւէ, ձեռքը անոր
զլխուն վրայ դնելով եւ ողորմեսցի ը-
սելով :

78 — Կատարելապէս խոստովանիլը ի՞նչ-
պէս կըլլայ :

— Խոստովանութիւնը կատարեալ ըլլա-
լու համար շորս պայման կայ :

79 — Եյս պայմաններուն առաջինը ո՞րն է :

— Մեղաւորը իր մեղքովը Բատուծոյ
երեսէն իյնալուն վրայ եւ անոր զինքը

առանձախ իշխանութենէ աշխատելով ը-
րած բարերարութեանը դէմ ապերախտ
գտնուելուն վրայ սրտանց զղջալ:

80 — Արրորդ պայմանը ո՞րն է:

— Ամէն մեղքերէ փախչիլը եւ զգուշա-
նալը հաստատ միտքը զնել:

81 — Արրորդ պայմանը ո՞րն է:

— Վործած մեղքերէն մէկ բան մըն ալ
չըպաշելով ամէնն ալ պատմել քահանա-
յին. որ է խ ստովանիլ:

82 — Ի՞նչ որ մոռցածը գտնուի նէ խոստո-
վանութիւնը անկատար կըլլայ:

— Այ՛ն. անո՞ց ալ թողութիւն կը գըտ-
նէ. բայց այս պայմանով որ ետքը միտ-
քը եկա ատենը խոստովանուի. վասն
զի այն ատենը չըխոստովանուի նէ, այն
մեղքը մոռ. շածնելուն կարգէն ելլե-
լով թողութիւն ալ չըգտնել:

83 — Երրորդ պայմանը ո՞րն է:

— Վա՛նայն խոստովանողին մեղքե-
րուն ի խարէն ի՛նչ բարեպաշտական գործ-
քատուիրէ նէ, անպակաս կատարել:

84 — Այս խորհուրդը ի՞նչ շնորհք կուտայ ընդունողին :

— Առով՝ ընդունողը Աստուծոյ հետ կը հաշտուի, եւ մեղքերը այնպէս կը սքսուի, որ անկէջ ետքը եկեղեցւոյ ո՛ր խորհուրդն ընդունի նէ՛ անով տրուած շնորհքն ալ կընդունի :

85 — Հինգերորդ խորհուրդը ո՞րն է :

— Պսակ . որով իրարու հետ ազգակա- նութեան կամ խնամութեան կամ կնքա- հայրութեան կողմէն մօտաւորութիւն չու- նեցող այր մը եւ կին մը՝ եկեղեցւոյ զա-ւակ շատցընելու համար քահանայական օրհնութիւնով իրարու հետ կը միանան հաստատուն պայմաններով :

86 — Ի՞նչ են այն պայմանները :

— Քանի որ կենդանի են նէ իրարու ան- հաւատարմութիւն չընել . բնաւ իրարմէ չը զատուիլ . եւ ուրիշի հետ չը միանալ :

87 — Իրարմէ զատուելու օրինաւոր պատճառ մը չը կրնար մի ըլլալ :

— Այսպէս պատճառ կայ ալ նէ՛ միմեկ

զատուելու համար է. ուրիշի հետ միա-
նալու պատճառ չըկայ քանի որ զատուա-
ծը կենդանի է:

88 — Ըսած կերպովդ իրարու մօտաւոր այր
եւ կին իրարու հետ միանաննէ՝ պսակ-
ուած չեն ըլլար:

— Չէ՛. եւ անանկներուն վրայ պսակի
օրհնութիւն կարդացողն ալ՝ այս կերպ
միացողներն ալ ծանր մեղք կը գործեն:

89 — Պսակուածները ի՞նչ շնորհք կըն-
դունին:

— Աղջակոհ եւ մարուր մնալու. եւ
ծնած զաւակները քրիստոնէութեան պա-
հանջածին պէս կըթելու շնորհքը կըն-
դունին:

90 — Ա եցերորդ խորհուրդը ո՞րն է:

— Չեւնագրութիւն. որ է եկեղեցւոյ
պէսպէս գործքերը կատարելու համար
ընտրուած մարդոցը կամ միայն ձեռք
դնելով գլխուն վրայ եւ կամ օծելով ալ
այն եկեղեցական պաշտօնին յատկացը-
նել:

91 — Ամեն ձեռնադրուածները ինչո՞ւ չեն
օծուիր :

— Անոր համար որ էկեղեցւոյ պաշտօն-
ները աստիճան աստիճան բաժնուած են .
ուստի ձեռնադրութիւնը կարգ ալ կըսուի .
եւ միայն բարձր աստիճանի հասնողները
կ'օծուին :

92 — Քանի՞ են ձեռնադրութեան աստի-
ճանները :

— Արկու կարգ կը բաժնուին . մէկը փո-
քրը եւ մէկը սուրբ :

93 — Փոքր աստիճանները որո՞նք են :

— Ղոնապանութիւն . ընթերցողութիւն .
երդմնեցուցչութիւն եւ ջահընկալութիւն .
եւ այս կարգերը առնողներուն Ղապիր
կըսուի :

94 — Ասոնց պարտականութիւնը եւ գոր-
ծերը ի՞նչ են :

— Ահեղեցին ամեն ժամանակ աստուա-
ծային պաշտօնին ներկայ գտնուիլ . եւ
ճաշու զիրքերը եւ շարականները կարգաւ .
եւ ժամերգութեան ատեն յատկացած

ժամանակները մով բռնել. եւ առանձին
ալ յ ը մէկ մէկ կանոն սաղմոս կարդալ :

95 — Սուրբ աստիճանները ո՞րն են :

— Ախասարկաւագութիւն. Սարկաւագու-
թիւն. Քրօնհանայութիւն. Ապիսկոպա-
սութիւն եւ Ասթուղիկոսութիւն : Ասոնք
ամէնն ալ զատ զատ գործ եւ պաշտօն
ունին, եւ վերջի երեք կարգը տանողնե-
րը Քիայն օծում կունենան :

96 — Ախասարկաւագին գործն ի՞նչ է :

— Սուրբ Պատարագին հացն ու գինին
պատրաստել, եւ սուրբ Պատարագին գոր-
ծածուած կտաւեղէնները լուալ եւ մա-
քուր պահել :

97 — Սարկաւագին գործն ի՞նչ է :

— Այկեղեցւոյ մէջ խնկարկութիւն ընել.
սուրբ Աւետարան կարդալ. եւ սուրբ Պա-
տարագի սպասաւորութիւն ընել :

98 — Քրօնհանային գործն ի՞նչ է :

— Մկրտել. սուրբ Պատարագ մատու-
ցանել. խոստովանանք մտիկ ընել, եւ սր-
ձակուստալ. եւ պսակ ընել : Ասոնք պաշ-

ածնն է նաեւ ժողովուրդը հովուել եւ
բարեգործութեան յորդորել. եւ իրարու
հետ խռովածները հաշտեցընելու աշ-
խատիլ:

99 — Եպիսկոպոսին գործն ի՞նչ է:

— Չեւնադրութիւն ընել. եկեղեցի օ-
ծել. եւ իրեն յանձնուած եկեղեցիին
ամէն բաները կարգադրել որ կանոննե-
րու համեմատ երթան:

100 — Կաթուղիկոսին գործն ի՞նչ է:

— Եպիսկոպոս ձեռնադրել. մեռն օրհ-
նել. եւ իր ազգին ամէն եկեղեցիներուն
մէջ եկեղեցական կանոնները եւ կարգադ-
րութիւնները անխախտ պահել տալու
հոգ տանիլ:

101 — Հապա վարդապետները ի՞նչ են:

— Կրօնաւոր եւ շկարգուած քահանայ են,
որ կրօնաւորութեան նշան վեղար ունին
առանձին օրհնութեամբ եպիսկոպոսէն
տրուած. եւ զատ արարողութեամբ եւ ա-
ղօթքի երով զաւազանի իշխանութիւն առ-
նելով՝ քարոզութեան պաշտօնն ալ իրենց
յատկացած է:

102 — Անանկ է նէ վարդապետ շեղող քա-
հանաները կրնան կարգուիլ :

— Չէ՛. սուրբ աստիճաններ առնողները
առաջուց կարգուած կրնան ըլլալ. բայց
այս սուրբ աստիճանները առնելէն ետքը
ասոնց մէկն ալ չեն կրնար կարգուիլ. եւ
կարգուին ալ նէ՛ իրենց եկեղեցական աս-
տիճանէն կիյնան :

103 — Աստիճաններուն կարգուիլը մե՞ղք է :

— Այո՛. վասն զի կարգ առած ատեն-
նին եկեղեցւոյ մէջ Աստուծոյ առաջը ուխտ
ըրած են չկարգուելու. ուստի ուխտա-
զանցութեան ծանր մեղքին տակը կիյ-
նան :

104 — Եթե՞նորդ խորհուրդը ո՞րն է :

— Այնքին օժումն. որ օժումն հիւան-
դաց ալ կըսուի. եւ այն խորհուրդն է որ
ծանր հիւանդներուն վրայ քահանաները
կերթան սուրբ Աւետարան եւ գիրք կը
կարդան. եւ սուրբ կենաց փայտով կամ
սրբոց մասուկներով խաչահանգիստ կը-
նեն եւ սուրբ հաղորդութիւն կուտան :

105 — () ծուճն ըսուածը ասո՞նք են :

— Ա՛յ. դրոշմի խորհուրդին օժմանք
այէս այս խորհուրդիս մէջ ալ հիւանդին
աչքը եւ սկանչը եւ քիթը եւ բերանը
եւ ձեռքը եւ իրտը եւ ոտքը յատկապէս
օրհնած իւղով օժել կայ :

106 — Հայս հիւանդներուն ինչո՞ւ չըլ-
լուիր այս օժու՛ր .

— Այն զի ընելը հարկ չէ սեպուած ,
եւ օրինաւոր պատճառներ եղած են այս
խորհուրդիս արարողութենէն օժու՛ր
խափանուելու :

107 — Այս խորհուրդիս բերած շնորհքը
ի՞նչ է :

— Ասով հիւանդը կարողութիւն կըս-
տանայ ծանր հիւանդութեան եւ մահուան
նեղութիւններուն արիարար համբերելու .
թէ որ թեթեւ մեղք մըն ալ ունի նէ կը
մաքրուի . երբեմն թէ որ Աստուած կամք
ընէ նէ՛ վտանգէն ազատուելով բժշկու-
թիւն ալ կը գտնէ :

108 — Հիւանդին ամէն մեղքն ալ այս խորհրդովս չե՞ն մաքրուիր:

— Այ՛նք. ծանր մեղքերը մաքրելու համար ապաշխարութեան խորհրդէն զատ հնարք չըկայ:

109 — Անանկ է նէ քանի մը տեսակ մեղք կայ:

— Այ՛. երեք տեսակ են. սկզբնական, ներելի, եւ մահացու:

110 — Սկզբնական մեղքը ի՞նչ է:

— Ադամայ եւ Աւելի գործած եւ իր բոլոր սերնդոցը անցած մեղքն է. որ մինակ մկրտութեան խորհրդով կը սրբուի:

111 — Ա, երելի մեղքը ի՞նչ է:

— Այն մեղքերն են. որոնցմէ մարդ իր տկար բնութեանը համար չըկրնար միշտ պէտք եղածին պէս զգուշանալ. կամ իրեն ինկած բարի գործ մը գործելու զանցառութիւն կընէ: Ասանկ գործքերը եւ զանցառութիւնները. մարդոյս հոգին կը տկարացընեն, բայց չեն մեռցընիր:

112 — Մ ահացու մեղքը ի՞նչ է :

— Այն է որ մէկը գիտնալով Աստուծոյ եւ եկեղեցւոյ պատուիրանքներուն դէմ կը գործէ . իրեն կիրքը Աստուծոյ եւ եկեղեցւոյ հրամայած պատուիրանքներէն վեր կը բռնէ : Այսպիսի գործքերը մարդը հոգեւորապէս կը մեռցընեն . եւ անոր համար մահացու կըսուին :

113 — Աստուծոյ պատուիրանքները ո՞րն են :

— Անոնք են՝ որ Աստուած նախ Ագամայ բերնով եւ ետքը Սովսէս մարգարէին գրով տուաւ . եւ ամէն մարդ պարտաւոր է անոնք պահելու :

114 — Այս պատուիրանքները քանի՞ հասն են :

— Հասն են . անոր համար ալ տասնաբանեայ պատուիրանք կըսուին :

115 — Առաջին պատուիրանքը ո՞րն է :

— Միւսեցես զտէր Աստուած քո յամենայն սրտէ բուսմէ : Ինչոր սրտովդ քու տէր Աստուածդ սիրէ :

116 — Այս պատուերովս ի՞նչ ընելու կը պարտաւորիմք :

— Մեզի ամենէն շատ սիրելի եղածներէն ալ աւելի զ՚ստուած սիրել. անանկ որ՝ անոր սիրոյն հակառակ դալու բան մը ուրիշի սիրոյն համար չընեմք, եւ միշտ անոր երկրպագութիւն ընել եւ անիկայ պաշտել. եւ մեր հոգեւոր բարութեանը եւ օգտին համար անոր բանեցուցած գործիքները եւ միջնորդները յարգել եւ պատուել :

117 — Մեր հոգեւոր բարութեանը համար Աստուծոյ բանեցուցած գործիքները ո՞րն են :

— Թէպէտ Քրիստոսի սուրբ մարմնոյն դրպած ամէն բաները պատուելու արժանաւոր են. ինչպէս սուրբ խանձարուրը. սուրբ պատմութեանը. սուրբ պատառակը. սուրբ գեղարդը եւ այլն. բայց ամենէն գերազանց է սուրբ խաչը :

118 — Ինչո՞ւ համար սուրբ խաչը ամենէն գերազանց է :

— Սաան զի մեր հոգւոյ փրկութիւնը

որ Վրիստոսի մեռնելովն եղաւ, — սուրբ
խաչին վրայ կատարեցաւ. եւ անոր եր-
կըրպագելի սուրբ արիւնը սուրբ խաչին
վրայ թափեցաւ:

119 — Աշկեցեցիներուն մէջ ոսկիէ եւ ար-
ծաթէ եւ ուրիշ բաներէ շինուած խա-
չերը ինչո՞ւ համար կը պատուեմք:

— Թէպէտ անոնց վրայ Վրիստոսի ար-
իւնը թափած չէ՛, բայց Վրիստոսի
բուն սուրբ խաչին յիշատակը մեր վրա-
քին մէջ նորոգելով, երկրպագութեան
արժանաւոր ըլլալու հասար սուրբ մեռոնի
ածուժովը կը սրբագործին. որով ասոնց
ըբած պատիւնիս ալ բուն սուրբ խաչին,
եւ անոր միջնորդութիւնովը Վրիստոսի կը
վերարեբի:

120 — Արեանիս ինչո՞ւ կը խաչակնքեմք:

— Ս'եր հոգեւոր փրկութիւնը եւ ամէն
չնորհք սուրբ խաչին արդիւնքն է. դի-
ւայ զօրութիւնն ալ ասով տկարացաւ.
ուստի խաչակնքելիս Վրիստոսի խաչին
եւ մահուանն արդեանցը դաւանութիւն.
միանգամայն եւ դիւական պատահարներէ

եւ պէսպէս փորձութիւններէ պահպանութիւն մըն է :

121 — Ս եր հոգեւոր օգտին համար Աստուծոյ բանեցուցած միջնորդները ո՞վ են .

— Ասխ եւ առաջ եւ ամէնէն գերագոյնը սուրբ կոյս Ս արիամ աստուածածիւն է . որմէ մարմին առաւ Քր. ստոս Աստուած . եւ երկրորդ՝ հրեշտակները եւ աւրիշ սուրբերը :

122 — Հրեշտակները ի՞նչպէս միջնորդ եղան մեր հոգեւոր օգտին :

— Աստուած այնպէս կարգադրած էր որ՝ Քրիստոսի տեսան մերոյ անօրինական գործքերուն պսշտօնեայ եղան , եւ փրկակութիւնը ժառանգելու անձանց սպասարութեան կը խըրկուին . եւ ամէն մարդ իրեն առանձին պահապան հրեշտակ ունի . որ մառդս ինքը շրջիտնալով ալ՝ ամէն ինչ սասակար բաներէն անիկոյ կը պահպանէ :

123 — Ուրիշ սուրբերը ի՞նչպէս միջնորդ եղան :

— Ոմանք սուրբ հաւատք սովորեցուցին մեր նախնիքներուն, որոնցմէ մենք ալ ծնանելով քրիստոնեայ եղանք. ոմանք հաւատքի համար մեռնելով հաւատքի վերահայուծիւն եւ հաստատութիւն տուին. եւ ոմանք ալ իրենց սուրբ վարքովը մեզի օրինակ եղան :

124 — Սուրբերը ի՞նչպէս պատուելու է :

— Եկեղեցիին անոնց տօնախմբութեանը սահմանած օրերը եկեղեցի երթալով, անոնք առ Մատուած բարեխօս բռնելով. եւ պատկերնին եւ մասունքներնին պատուելով :

125 — Սուրբերուն պատկերը ինչո՞ւ կը պատուեմք :

— Սուրբերը միշտ զՄատուած տեսնելով մեզի համար բարեխօս են. եւ անոնց միջնորդութեամբը Մատուծմէ վտարելած բարութիւններնիս՝ տեսած պատկերովնիս կը յիշեմք. որով այս պատիւը

սուրբերուն միջնորդութեամբը Մատուծոյ
կը վերաբերի. անոր համար սուրբ մե-
ռոնով օծելով եւ աղօթքներով կը խընդ-
րուի որ յատկապէս Մատուծոյ հրաշա-
գործ զօրութիւնը հանգչի այն պատկե-
րին վրայ :

126 — Մասունքները ինչո՞ւ կը պատուելք :
— Այսն է այն սուրբերուն մարմիններն
են, որոնց ձեռքովը Մատուած իր զօ-
րութիւնը եւ բարութիւնը ցուցուցած է .
եւ ասոնք պատուելը՝ ասոնցմէ մեղքեր-
նուս թողութիւն յուսալ չէ՛, այլ ինչպէս
որ պատկերներնուն վրայ, անանկ ալ մա-
սունքներնուն վրայ Մատուծոյ տպաւորած
յատուկ շնորհքովը մեղի ըրած բարութիւն-
ները ճանչնալ եւ զինքը փառաւորել է :

127 — Ի՞նչ բարութիւն կընէ Մատուած սրբ-
բոց մասունքովը եւ պատկերովը :
— Հատ հրաշքներ ըրած է. մինչեւ Ե-
ղիսէ մարգարէին սկիորներուն դպած մե-
ռելի մը ուղըննալը ստոյգ գիտելք սուրբ
գիրքէն ուրիշ Հատ հրաշքներ ըլլալն ալ՝
աչքովնին տեսնող հաւատարիմ պատմիչ-

ները անտարակուսելի կրնեն թէ պատկերներուն եւ թէ մասունքներու համարս

128 — Երկրորդ պատուիրանքը ո՞րն է :

— Ս'ի՛ առնուցուս զանուն Լստուծոյ քա՛հի վերայ սնոտեաց . Պորապ բաներու վերայ Լստուծոյ անունը բերանդ չառնես :

129 — Ե՛ս պատուէրովս ի՞նչ ընելու կը պարտաւորիմք :

— Սուտ տեղը կամ պէտք չեղած տեղը Լստուծոյ անուն լիչելով եւ Լստուծ վկայ բռնելով երգում չընել . Ճըշմարիտ խօսելու անանկ սովորել որ ըսածնիս հաւաստեմքն էլու համար երգում ընելու կարօտ չըլլամք վասն զի Քրիստոս տէրն մեր երգումը արգելած է :

130 — Ընաւ երգում ընելու չէ՞ մի :

— Երգում կրնայ ըլլուիլ, երբ որ դատաստանի մէջ դատաւորը երգում պահանջէ, այն ատենը արդարութիւնը երեւան ելլելու պատճառ կըլլայ այն երգումը . ուրիշ ամէն ժամանակ երգումը արգելուած է :

131 — Երբ որդ պատուիրանքը ո՞րն է :
 — Պատուեա՛ զօր շարաթումն : Եւրաթ
 օրը պատուէ՛ :

132 — Եւրաթ օրը ուրիշ օրերէն շինք զա-
 տերնէ՛ ի՞նչպէս պատուած կըլլամք :
 — Եւր աւուր պատիւը՝ որ Եւտուծոյ ա-
 բարչութենէն դադարած օրվան յիշատա-
 կը ըլլալուն համար է , Քրիստոսի տես-
 ուն մեւոյ կիրակի օրը յարութիւն առնե-
 լէն եւ Հոգւոյն սրբոյ գալստեամբը ե-
 կեղեցին կիրակի օրը հաստատուելէն ՚ի
 վեր , կիրակիի փո՛ստեցաւ . ուստի այս
 պատուէրովս ալ կիրակին պատուել կը
 պարտաւորի՛ք :

133 — Ի՞նչ ընելու է որ կիրակին պատուած
 ըլլամք :

— Պէտք է այն օրը բոլոր աշխարհային
 գործքերէն ետ կենալ . եկեղեցի երթալ .
 հասարակաց հետ տղօթք ընել . բարոյ
 մտկ ընել . սուրբ Պատարագ տեսնել .
 եւ ուրիշ հոգեւոր բաներով ժամանակ
 անցընել :

134 — Ընանկ է նէ կիրակի օրը մարդու հետ
տեսնուելու չէ :

— Երբայէս հարկ մը չըկայ, անմեղ կեր-
պով մարդու հետ տեսնուիլը եղբայրսի-
րութեան գործ է. եւ եղբայրսիրութիւնն
ալ բարեգործութիւն մըն է :

135 — Չորրորդ պատուիրանքը ո՞րն է :

— Մի արասցես քեզ կուռս : Գուն քե-
զի կուռք չըշինես :

136 — Հիմայ կուռք չըկայ. ուստի այդ պատ-
ուէրը մեզի համար չէ :

— Հիմայ ալ շատ տեսակ կուռքեր կան
որ ամէն մարդ կը պաշտէ. այս պատուէ-
րըս այն կուռքապաշտութիւնն ալ կարգիլէ :

137 — Ի՞նչ կուռքի կը պաշտեն հիմայ :

— Սարգիս իրենց յաջողութեանը հա-
մար Եստուծոյ յոյսը վերցընելով ի՞նչ
բանի որ յոյսերնին դրեր են նէ՛ այն բա-
նը կը պաշտեն Եստուծոյ տեղ :

138 — Եւրպէս յոյս ի՞նչ բանի վրայ կրնայ
դրուիլ :

— Ոմանք հարստութեան վրայ կը դնեն
յոյսերնին. արծաթապաշտ են : Ոմանք
մարդոց օգնութեան յուսալով անոնց ա-
մէն կամքին կը հնազանդին . մարդապաշտ
են : Ոմանք իրենց կամքը Եւտուծոյ հը-
րամանէն վեր կը բռնեն . կամապաշտ
են : Կան ալ որ կախարդներուն կը դիմեն՝
որ դուրերուն պաշտօնեաներն են . աս նք
ալ դիւապաշտ են : Եւս կերպ բաները
Եւտուծմէ վեր բռնող մարդիկ կուպաշ-
տութիւն կրնեն :

139 — Հինգերորդ պատուիրանքը ո՞րն է :

— Պատուեա՛ զհայրքո՛ եւ զմայր : Հայ-
րըդ ու մայրդ պատուէ՛ :

140 — Եւսով ի՞նչ բանի կը պարտաւորիմք :

Չէ՛ թէ մինակ մեր մարմնաւոր հայրը եւ
մայրը պատուելու պարտաւոր եմք, այլեւ
հոգեւոր ծնողքնիս եւ երախտաւորնիս ալ :

141 — Հոգեւոր ծնողքնիս ո՞վ են :

— Սեզի հոգեւոր բաներ եւ բարեգոյց-

Տուժիւն սովորեցընողները. եւ ասանկ են նախ՝ խոստովանածահայր քահանայնիս, եւ անկէց ետքը վարժապետնիս, եւ մեզի բարի խրատ տուող մարդիկը ինչ ասախ՝ ճանի կըլլան նէ ըլլան :

142 — Կըբախտաւորնիս ո՞վ են :

— Ս եր օգտին համար եւ մեզ մարմնաւոր վնասներէ ապահով պահելու համար աշխատող բարեխնամ ինքնակա, թագաւորնիս. աէրուժեան մեծերը եւ ազգային կառավարութեան ղլուխները. եւ մեզի ապրելու համար արուեստ կամ արտաքերնիս լուսաւորելու համար գիտութիւն սովորեցընող վարպետները : Այլ ով որ մեզի ինչ եւ իցէ կերպով աղէկութիւն ըրած են նէ, անոնց ամէնն ալ :

143 — Ս կցերորդ պատուիրանքը ո՞րն է :

— Ս ի սպանաներ : Ս արդ մի՛ մեռցըններ :

144 — Այս պատուէրով ի՞նչ բանի կը պարտաւորիմ :

— Ս արդ մեռցընելէն ետ կենալ. վա-

սըն զի պատիժը մահ է. բայց ուրիշ
տեսակ սպանութիւններ ալ կան. որոնք
աշխարհքի մէջ չը պատժուին ալնէ, ան-
դիի աշխարհքը շատ ծանր կերպով կը
պատժուին:

145 — Ո՞րն են ասոնք:

— Սէկուն սնունը աւրել, բամբասե-
լով կամ զը պարտութիւն ընելով. գէշ
խօսելով սիրտը ծակել. ապրուստին ար-
գելք դնել, կամ անոր ապրուստի հո-
մար գաած միջոցը ձեռքէն յափշտակելու
աշխատիլ. եւ մեռնելուն փսփոսք մը ցու-
ցունել. ասոնք ամենն ալ մարդասպանու-
թիւն կը սեպուին:

146 — Կօթներորդ պատուիրանքը ո՞րն է:

— Սի՛ շնար: Ենութիւն մի՛ ըներ:

147 — Ըսով ինչի՞ կը պարտաւորի՞ք:

— Պսակի խորհրտով հրամայուած էն դուքս
կամ անոր դէմ բան չընել:

148 — Ու երորդ պատուիրանքը ո՞րն է:

— Սի՛ գողանար: Կողութիւն մի՛ ը-
ներ:

149 — Ասով ինչի՞ կը պարտաւորիմք :

— Ուրիշին եղած ստացուածքը մեր վըրայ չանցընել . այսինքն տիրոջմէն գաղտուկ բան մը չառնել . սուտով մէկուն ձեռքէն ստակ կամ ուրիշ բան չառնել . աղէկի գնով գէշ բան , կամ աղէկը իր արժէքէն վեր գնով չըծախել , կշիռքի եւ չափի խարդախութիւն չըբանեցընել . գիտնալով գէշ ստակ չըքըչել . աւուրչէքով բանողներուն վարձքը չըկըտրել . եւ բանողներն ալ կը պարտաւորին բանելու ժամերին պարապ չանցընել :

150 — Իններորդ պատուիրանքը ո՞րն է :

— Մ'ի՛ սուտ վկայեր : Սուտ վկայութիւն մի՛ ըներ :

151 — Այս պատուէրով ի՞նչ ընել կը պարտաւորիմք :

— Չէ՛ թէ միայն դատաստանի առաջ , այլ ուր որ ըլլայ նէ մարդու կամ բանի մը համար սուտ վկայութիւն տալու չէ : Չըգիտցած բանին վրայ խօսիլն ալ կարգիլէ այս պատուիրանքս , որ խօսածը

գիպուած ուլ ճշմարիտ ելլէ ալ նէ՝ խօսողը
ստախօս է: Ուրիշին մտքին վրայ դատում
ընելն ալ սուտ վկայութիւն է:

152 — Տասներորդ պատուիրանքը ո՞րն է:
— Մի՛ ցանկանար տան ընկերիքո եւ մի՞
ամենայն ընչից նորա: Ընկերիդ տանը եւ
անոր ստացուածքին աչք մի՛ զարներ:

153 — Ասվ ինչի՞ կը պարտաւորիմք.
— Ուրիշին աղէկ բաներուն որ մենք չու-
նիմք, աչք չըզարներ, անոնցը անիրա-
քաւութիւնով յափշտակելու մտքով. եւ
անոնց աղէկութեանը չընախանձիլ:

154 — Այս պատուիրանքներուս ամէնէն գըլ-
խաւորը ո՞րն է:
— Աստուած բոլոր անձովդ եւ սրտիւդ
սիրէ՛. ընկերըդ կամ ուրիշ մարդիկը քու
անձիդ պէս սիրէ՛. ինչ բան որ քեզի
ընելնին չես ուղեր՝ ուրիշին մի՛ ըներ.
եւ ինչ որ կուզես որ քեզի ընեն, դուն
ալ ուրիշին նոյնը ըսէ՛: Ասոնք կատարե-
լով բոլոր պատուիրանքները կատարած
կըլլաս:

155 — Այկեղեցւոյ պատուիրանքները քանի՞
են .

— Հինգ են . եւ ամէնն ալ Մատուծոյ
պատուիրանքներուն հետ կապակցութիւն
ունին :

156 — Մատուցինը ո՞րն է :

— Աիրակի եւ տօն սահմանուած օրերը
եկեղեցի երթալ եւ սուրբ Պատարագ
տեսնել :

157 — Արիւորդը ո՞րն է :

— Արակի եւ տօն օրերը խանութ չըբա-
նալ եւ բան չըբանիլ :

158 — Արրորդ ո՞րն է :

— 'Գոնէ' տարին երկու անգամ քահա-
նային առաջը կատարելապէս խոստա-
վանիլ :

159 — Չորրորդը ո՞րն է :

— Տարին գոնէ երկու անգամ կատարեալ
խոստովանելէն ետքը , սուրբ հաղորդու-
թիւն առնել :

160 — Հինգերորդը ո՞րն է :

— Այկեղեցիին սահմանած

բրոնել, եւ ի՞նչ բան որ այն օրերը տե-
տելն արգիլուած է նէ, չուտել:

161 — Պահ.բ կենալ չըկրցողը ի՞նչ ընելու է:
— Կրնայ այնպէս տկար անձ մը բժշկիմ
վկայութիւնովը եւ խոստովանահայր քա-
հանային հրամանովը ուտել ի՞նչ որ իրեն
վնաս չըտար:

162 — Տասնաբանեայ պատուիրանքներուն եւ
եկեղեցւոյ պատուիրանքներուն դէմ գոր-
ծելէն զատ մահացու մեղք չըկայ մի:
— Իրաւ ասոնց դէմ գործելն ալ մահա-
ցու մեղք է. բայց այս անունովս եօթն
գլխաւոր մեղք կը հասկըցուին, որոնցմէ
ուրիշ շատ մեղքեր կը ծագին:

163 — Ըստ եօթն գլխաւոր մահացու մեղ-
քերը ո՞րն են:
— Ըստնք են. հպարտութիւն, նախանձ,
բարկութիւն, ծուլութիւն, ապահու-
թիւն, որկրամոլութիւն, եւ բղջախոհու-
թիւն:

164 — Հպարտութիւնը ի՞նչ է:
— Ինքըզինքը մեծ բանի մը տեղ դնել

Մտուծմէ առած աղէկութիւնները իրեն-
մէ կարծել, եւ ուրիշներն ալ իրմէ վար
բըռնել :

165 — Մտ մեղքիս դէմ ի՞նչ դեղ կայ :

— Խոնարհութեամբ մտրդս անանկ միա-
քը դնելու է որ ինքնին ոչինչ է . եւ ինչ
աղէկութիւն ունինէ Մտուծմէ է :

166 — Մտխանձը ի՞նչ է :

— Ուրիշին եղած աղէկ բաները չը քա-
շել, եւ ինչո՞ւ ինձի չեղաւ ըսելով տրտա-
միլ . եւ սկսիլ այն մարդուն անունը աւ-
րել եւ յարգը կոտորել եւ մինչեւ մեռնե-
լուն անդամ փափայթիլ :

167 — Մտոր դեղն ի՞նչ է :

— Եղբայրս իրութիւն . որով ուրիշին եւ
ղած գէշութիւնն ալ աղէկութիւնն ալ ի-
րեն եղածի պէս սեպելով միշտ անոր
համար աղէկ խօսիլ եւ ձեռքէ եկած ա-
ղէկութիւնը ընել :

168 — Մարկութիւնը ի՞նչ է :

— Մէկուն իրեն դէմ եղած պըղտիկ
անարգութեան մը անդամ չը դիմանալ .

որ ասկէց շատ մեծ մեղքեր, մինչև
մարդասպանութիւն ալ կը ծագէ:

169 — Ասոր գեղն ի՞նչ է:

— Հեղութիւն եւ երկայնամտութիւն բա-
նեցընել. եւ ուրիշներուն մեղի ըրած
պակասութիւններուն ներել:

170 — Ծուլութիւնն ի՞նչ է:

— Իր անձին հանգստութիւնը Աստու-
ծոյ կամքը կատարելէն վեր բըռնել. եւ
բարի գործք գործելու անհոգանալ:

171 — Ասոր սեղն ի՞նչ է:

— Արիութիւնն է. որով պէտք է Աստու-
ծոյ կամքը եւ պատուէրները կատարելով
համար ամէն ատեն աշխատիլ. որ անպատ-
րաստ գտնուելով հոգեւոր կորստեան վը-
տանգի մէջ չիյնըվի:

172 — Ագահութիւնը ի՞նչ է:

— Ինչ եւ իցէ կ'ըզով եւ արդարը եւ ա-
նիրաւը չընայելով, խելքը միտքը ստանի
վատարկելու տալ եւ վատարկածը իրեն
քովը պահել եւ մարդու մը օգուտ չընել:

173 — Ըստր դեղն ի՞նչ է :

— Ըստ առաջնուն ըլլալ . անիրաւ վաստակ . ներէ ետ կենալ . եւ արդարութեամբ վաստրկածներէն ալ աղքատները հոգալ . եւ եկեղեցոյն եւ ազգին օգտակար եւ ստակով ըլլալու բաներուն օգնութիւն ընել :

174 — Արկրամոյութիւնն ի՞նչ է :

— Իր որովայնիս ծառայութիւն ընելը Ըստուծոյ ծառայութիւն ընելէն աւելի ընարել . մարմինը պարարելու համար . Ըստուծոյ պատուիրանքները չըպահել . գինովնալը եւ առանց հիւանդութիւն մը ունենալու պահք չըբռնելը այս մեղքիս տակը կը պարունակին .

175 — Ըստր դեղն ի՞նչ է :

— Ժուժկալութիւն . որով մեզի հեշտալի եւ ախորժեղի բաները չափաւանց կամ իր ժամանակէն դուրս գործածելէն ետ կենամք :

176 — Ըղջախոհութիւնն ի՞նչ է :

— Հանկութեան կիրքը զըսպել չըկը-

նալով անոր հետեւիլ, որով տասնարանայ պատուիրանքին եօթներորդին դէմ մեղանշել կրլայ :

177 — Ը.Յ. մեղքիս դեղն ի՞նչ է :

— Աղջախոհութիւն. որ է պիղծ մտածմունքներու շինալ, եւ ցանկութիւնք գրգռելու պատճառ եղող բաներէն հետու կենալ. եւ առաւելապէս որկրամոլութենէն եւ ծուլութենէն զգուշանալ :

178 — Ը.մէն մեղքերուն մէկէն ընդհանուր դեղ մը կա՞յ մի :

— Ը.Յ.՝ եւ սա չորս բաներուն մտածութիւն է, որ է սահ. դատաստան. դժոխք եւ սրքսյութիւն :

179 — Մ.ահն ի՞նչ է :

— Մ.արմինը կենդանացրնոտ հոգիին մարմինէն զատուելն է. որով մարդս անկէց ետքը ո՛չ սղէկ եւ ո՛չ գէշ բան մը գործելու կարող չըլլալով ինչպէս մեռաւնէ, թէ՛ մեղաւոր թէ՛ անմեղ. միշտ անանկ կը մնայ :

130 — Մ ահուան մտածութիւնը մեղքէ
ի՞նչպէս կը պահէ:

— Մ ահուան ժամանակը անյայտ է. եւ
յանկարծակի ալ կրնայ դալ. այն ատենը
անպատրաստ ըլլալով մեղքի մէջ գը-
նուիմք նէ, մեռնելէն ետքը ապաշխարու-
թիւն չըկրնալով ըլլալ՝ յաւիտենական հո-
գեւոր կորստեան կերթամք:

131 — Մ եռելներուն համար սուրբ Պատա-
րագը եւ ուրիշներուն ըրած ողորմու-
թիւնը եւ բարի գործքը օգուտ չե՞ն մի-
ըներ:

— Արնեն. բայց անոնց համար՝ որ մեղ-
քերնուն զղջացած եւ խոստովանած, եւ
կատարեալ հաւատքով եւ Եստուծոյ ո-
ղորմութեանը ապաւինելով մեռած են.
իրենց պատուիրած ապաշխարութեան
գործքը կատարելու ժամանակ չեն ունե-
ցած:

132 — Տեսած օգուտնին ի՞նչ է:

— Մ եղքերուն տպաւորած անմաքրու-
թենէն, ասոնցմով բոլորովին մաքրուե-

Ընդ յարութիւն առած առննին արդար-
ներուն կարգը կը մըտնեն :

183 — Մ արդիկ ի՞նչպէս յարութիւն կառ-
նեն :

— Աշխարհիս վերջացած ժամանակը Աս-
տուծոյ հրամանաւը ամէն մարդու հոգի
վերստին իր մարմնոյն հետ միանալով կը
կենդանանայ, որ անկէց ետքը մէկ մըն
ալ չըմենիր :

184 — Փրտտած եւ հող կըտրած մարմինը
ի՞նչպէս հոգւոյն հետ կը միանայ :

— Չէ՛ թէ միայն հող կըտրածը, այլ եւ
ջուրը խեղդուելով ձուկերու կեր եղածն
ալ, գազաններու կեր եղածն ալ, կրակի
մէջ այրածն ալ՝ Աստուծոյ, հրամանն ե-
ղածին պէս անոր կտրող զօրութեամբը
կը նորոգի եւ ամբողջ եւ կատարեալ մար-
մին կըլլայ ինչպէս էր մեռնելէն առաջ.
եւ հոգին անոր հետ միանալով կը կեն-
դանացընէ :

185 — Գառաստանն ի՞նչ է :

— Մ արդիկ յարութիւն առնելէն ետքը

Վրիստոս տէրն մեր աստուածային փառ-
քով պիտի գայ, եւ Մդամէն մինչեւ այն
օրը աշխարհք եկած մարդոց բարի եւ
չար գործքերը դատելով ամէն մե-
կին արժանի յաւիտենական հատուցումը
պիտի ընէ:

186 — Ետք մտածութիւնը մեղքէ ի՞նչպէս
կը պահէ:

— Որովհետեւ դատողը Եստուած է՝ որ
մարդոյն սրտին գաղտնի խորհուրդներն
ալ գիտէ եւ անաչառ կը դատէ, անոր
դատաստանին պարտաւոր չըզանուելու
համար մեղքի վերաբերեալ բան մը խոր-
հելէն անգամ կըզգուշանամք:

187 — Գժոխքը ի՞նչ է:

— Սատանաներուն համար պատրաստուած
յաւիտենական տանջանքին տեղն է. ուր
Եստուած կը խրոչէ իր հրամանին չըհը-
նազանդելով սատանային գործերուն հե-
տեւող եւ առանց զղջալու եւ ապաշխա-
րելու մեռնող մարդիկը:

188 — Եսոր մտածութիւնը մեղքէ ի՞նչպէս
կը պահէ :

— Տանջանքին յաւիտենական ըլլալը, եւ
մարդոյս յարութիւն տունելէն ետքը մէկ
մըն ալ չըկրնալ մեռնիլը, եւ դժոխքէն
չըկրնալ ազատուիլը մարդոյն սրտին
մէջ փրկարար վախ մը կը ձգէ . որ ա-
սոնք մտածելով մեղք գործելու չըհա-
մարձակիր :

189 — Երբայութիւնն ի՞նչ է :

— Եստուծոյ պատուիրանքները կատարող
եւ գործած մեղքերնէն կատարեալ ապաշ-
խարութիւնով մաքրուած մարդոց համար
պատրաստուած յաւիտենական վառաց եւ
երջանկութեան տեղն է, ուր աստուած-
տեսութեամբ յաւիտեան կը զմայլին :

190 — Եսոր մտածութիւնը մեղքէ ի՞նչպէս
կը պահէ :

— Արովհետեւ միայն մեղքն է մեզ ա-
սանկ անվախճան երջանկութենէ մը յաւի-
տեան զորկողը, այս երջանկութեան
հասնելու եւ յաւիտեան վայելելու եւ

Մտուծայ տեսութեամբը միշտ զմայլելու
փափաքը մեզ ամեն մեղքէ հեռու կը պահէ
և ամեն առարկինութեան կը յօժարեցընէ :

191 — Աշխարհքիս վայելքներու մէջ՝ որ ա-
սանկ մտածութիւնները մեզի կը մոռցը-
նեն, միշտ ասոնք մտքերնուս մէջը պա-
հելու ճարն ի՞նչ է :

— Ամեն ատեն Մտուծոյ աղօթելով ա-
նոր շնորհքը եւ հզօր օգնութիւնը խընդ-
րելու եմք, որ այդ չորս բանին յիշա-
տակը մեր մտքին մէջ հաստատէ :

192 — Մտուծ մէ աղօթքով ինչ որ ուզեմք
նէ կուտայ :

— Այո՛. ինչ որ մեզի հոգեւոր օգուտ ունի
կամ հոգեւորապէս մնաս մը չունի նէ՛
կուտայ. ուստի երբեմն մեր ուզածը չը-
տայ ալ նէ՛ մեզի կարեւորութիւն ըլլա-
լուն համար տուածներէն ալ շնորհակալ
ըլլալու եմք. չըտուածներէն ալ :

193 — Ի՞նչ կրնամք ուզել Մտուծ մէ որ մեզի
օգտակար ըլլայ, կամ մնասակար չըլլայ :

— Ինչ որ Վրիստոս տէրն մը տէրու-

նական աղօթքին մէջ ինգրեւ սուրեցուց
առաքեալներուն . մեր ամէն աղօթքն ալ
անոր համեմատ ըլլալու են :

194 — Որն է տէրունական աղօթքը :

— Եւս է . « Հայր մեր որ յերկինս ես ,
,, սուրբ եղիցի անուն քո . եկեցէ ար-
,, քայութիւն քո . եղիցին կամք քո որպէս
,, յերկինս եւ յերկրի . զհաց մեր հանա-
,, պազորդ տուր մեզ այսօր . եւ թող մեզ
,, զպարտիս մեր , որպէս եւ մեր թողումք
,, մերոց պարտապանաց . եւ մի՛ տանիր ըզ-
,, մեզ 'ի փորձութիւն , այլ փրկեա՛ 'ի շա-
,, րէ : Օ, ի քո է արքայութիւն եւ զօրու-
,, թիւն եւ փառք յաւիտեանս , ամէն ,, :

Einmal mehr die Welt der Natur
 und die Welt der Kunst. Die Welt
 der Natur ist die Welt der
 Wissenschaften. Die Welt der
 Kunst ist die Welt der
 Dichtung. Die Welt der
 Wissenschaften ist die Welt
 der Vernunft. Die Welt der
 Dichtung ist die Welt der
 Phantasie. Die Welt der
 Vernunft ist die Welt der
 Logik. Die Welt der Phantasie
 ist die Welt der Imagination.
 Die Welt der Logik ist die Welt
 der Ordnung. Die Welt der
 Imagination ist die Welt der
 Freiheit. Die Welt der Ordnung
 ist die Welt der Gerechtigkeit.
 Die Welt der Freiheit ist die
 Welt der Liebe. Die Welt der
 Gerechtigkeit ist die Welt der
 Wahrheit. Die Welt der Liebe
 ist die Welt der Harmonie.
 Die Welt der Wahrheit ist die
 Welt der Schönheit. Die Welt
 der Harmonie ist die Welt der
 Glückseligkeit. Die Welt der
 Schönheit ist die Welt der
 Vollkommenheit. Die Welt der
 Glückseligkeit ist die Welt der
 Seligkeit. Die Welt der
 Vollkommenheit ist die Welt der
 Unsterblichkeit. Die Welt der
 Seligkeit ist die Welt der
 Ewigkeit. Die Welt der
 Unsterblichkeit ist die Welt der
 Ewigkeit. Die Welt der
 Ewigkeit ist die Welt der
 Ewigkeit.



1858





